




Ա Ր Ա Ր Ա Տ

ԹԻՒ Դ. — ՇՐՋԱՆ ԺԴ.

1880

ՏԱՐԻ ԺԲ. ԱՊՐԻԼ. 30.

ՔՐԻՍՏՈՆԵԱՅԻ ՈՒՐԱՆՈՒԹԵԱՄԲ ԱԵՐ ՆԱՅԵԼԸ ԴԵՊԻ ԵՐԿԻՆՔԸ
ԻՒՐ ՍՏԵՂԾՈՂԻՆ.

Ո՞ր էր, ո՞ր անցաք գնացիք իմ մանկութեանս գեղեցիկ օրեր, Ի՞նչ եղաք, սիրելի՛ ընկերներս, որոնց հետ առաջին անգամ մանկական խաղեր խաղալ սկսեցի, որոնց հետ ուրախ ուրախ և լաւ լաւ յոյսերով իմ մանկական հասակս, իմ անմեղ ու անհոգ կեանքս սկսեցի. Ախ, ինչպէս այն ժամանակը բաղդաւոր էի, ինչպէս ուրախ սիրտ ունէի, ու տխրութիւն և հոգս սոսա՞ծ բանը ի՞նչ է, ամենեւին չգիտէի. Ի՞նչի միշտ այնպէս չմնացի. Այն օրերի իմ փոքրիկ հոգսերս ու ցաւերս անգամ ի՞նչպէս զուր կանցնէին, կերթային, ինչպէս շուտ կ'մոռացվէին. Իմ նոր սկսած կեանքիս օրերն երջանիկ, երկնային օրեր էին, խաղով, ծիծաղով, զուարճութիւններով էի անց կացնում. Ի՞նչ անկարօտ ու հարուստ էի ինձ տեսնում, որովհետեւ դեռ ևս կարօտութիւններ ունենալը ինչ է, չգիտէի. դեռ ևս մի ընդարձակ ու փայլուն ապագայ իմ առաջին էր, մի ապագայ, որ ես իմ երեւակայութեանս գեղեցիկ պատկերներովն զարդարում էի.

Եւ ինչ որ մի ժամանակ, տղայութեանս օրերում, ինձ համար ապագայ էր, այժմ արդէն վաղուց անցած ժամանակ է դարձել. Բաւական յառաջ եմ գնացել, իմ կեանքիս ճանապարհը բաւական տեղ կտրել, անց կացել. Ախ, կարելի է — ո՞վ է իմանում — կարելի է կէսից աւելին արդէն անցած եմ. Եւ ի՞նչ բանի եմ արդեօք տիրացել բոլոր իմ կեանքիս այս մեծ կտորին մէջ. Որչափ փոքր բանի եմ հասել, համեմատելով ունեցած մեծ մեծ յոյսերիս հետ. Ի՞նչի չեղաւ, որ միշտ այնպէս մնամ, ինչպէս որ էի մի ժամանակ.



Ո՛ւր են իմ մանկութեանս ընկերները, որոնց հետ վայելում էի կեանքիս առաջին ուրախութիւններն: Մեծացան, փոխվեցան, ուրիշ բնութեամբ, ուրիշ տեսակ մարդիկ դարձան, որ չէի կարծէի թէ այդպէս կ'փոխվին: Շատերն հեռու տեղեր են, շատերն հեռացան ինձանից, և այլ ևս ինձ միտքներն չեն բերում: շատերն, բաւական ժամանակ է, արդէն քանի տարի ևս կայ, որ հողի տակը պառկած են, ուր որ ես ևս մի օր պէտքէ հանգչիմ: Ուրիշներն լաւ ապրումեն իմ բնակած տեղս. բայց նոցա մըտքերը, նոցա դիքքը, նոցա պարապմունքը այնչափ տարբեր են իմից, որ այժմ միմեանց վերայ օտար ու անծանօթ մարդիկների նման ենք նայում: Չէ, այժմ նոքա ամենեին այն չեն, որոնց հետ մի ժամանակ ուրախ օրեր անց կ'կացնէի. այժմ այն աշխարհը չէ, որի մէջ երբեմն կ'ապրէի շատ ուրախ ու զոհ սրտով, առաջվան թարմ ու կենդանի գոյներովն: Այլ ևս չէ երևում իմ աչքիս, և ամենայն փառաւորութիւն, ամենայն հանդէս ու տօներ այլ ևս իմ սիրտս այնպէս չեն ուրախացնում, ինչպէս մի ժամանակ, որ փոքրիկ բաները, աննշան մի ուրախութիւն պատճառող յանկարծ պատահած բաները ինձ այնչափ կուրախացնէին, որ ասել չեմ կարող:

Ի՞նչ եղաք, երջանիկ տարիներ, անկեղծ ու հաւատարիմ սիրոյ ժամեր, որ միակերպ անց կացրած տարիների կարժէիք. այլ ևս չկաք, անց կացաք, գնացիք: Իմ յիշողութեանս մէջ հազիւ է մնացել ձեր անգոյն ստուերը, որ իմ տխուր սրտիս ցաւը աւելացնէ: Ա՛յ իմ կեանքիս առաջվան տարիների քաղցր ընկերներ, որտեղ անյայտացաք, ո՛ւր էք, որ չէք երևում: Պիտի հասնէ արդեօք ձեզ իմ սրտի ձայնը, իմ սրտի, որ ձեզ տեսնելու կարօտն է քաշում: Չուր եմ ձեր ինձ համար թանկագին անունները տալիս. ի զուր եմ ձեր պատկերն իմ սրտումս նորոգում: Մենք բաժանված ենք, այլև միմեանց երեսն տեսնելու չենք: Ինչ որ տարիները, ինչ որ հանգամանքները, ինչ որ պատահումները ինձանից չլուցին, այն խլեց առաւ ձեռիցս, ինձ զուրկ թողնելով, մահն ու գերեզմանն: Դուք մեռաք, այսուհետեւ առանց ձեզ պէտքէ շարունակեմ ու վերջացնեմ իմ կեանքս: Պարժէր արդեօք, որ մենք այնպէս սրտէ ի սիրտ բարեկամ լինէինք, այնպէս սրտանց միմեանց կ'ամենայինք, սիրէինք, երբ որ մեր մէջ եղած ամենաթանկագին կապը այդպէս շուտով պիտի կտրվէր, երբ որ մեր սրտանց բարեկամութիւնն այսպիսի մի ամենակարճ ժամանակի համար պիտի լինէր:

Սիրով միտքս եմ բերում ձեզ, ողորմած հոգիներ: Դուք, որ այժմ մի լաւագոյն աշխարհի պայծառացած բնակիչներն էք, ինձ իմ կեանքիս մէջ միայն մի կարճ ժամանակի համար երեւցաք, որ ինձ օգնէք կեանքս աւելի լաւացնելու ու աւելի լաւ կերպով անց կացնելու: Ձեր ինձ հետ ունեցած հարազատ բարեկամութիւնը ձեզ հետ գերեզման տարաք և իմ սրտիս ցաւը ձեր ետեւից, որ պիտի անց չկենայ, մինչև որ ես ևս ձեր մօտ հողում պառկեմ:

Կեանքիցս ունեցած իմ բոլոր ակնկալութիւններիցս, իմ յոյսերիցս,

ինչ գուրս եկաւ: Ոյժ ու ջանք չինայելով գործ կատարեցի: ծանր զոր-
կանքների դիմանալով աշխատեցայ, որ զրութիւնս լաւացնեմ, յառաջա-
նամ: Շատ անգամ, վտանգներից յաղթված ընկայ, բայց յոյսը միշտ
դարձեալ ինձ տեղիցս հանումէր, ոտի կանգնեցնում, ինձ ոյժ ու սիրտ
տալիս: Շատ անգամ հոգսից, նեղութենից ու վախիցս, քիչ էր մնում,
որ ինքս ինձ բոլորովին կորցնեմ, բայց միտք էի անում, որ այսպէս չի
մնայ, ժամանակը կրօնիւմի այս քաջած օրերս կմոռանամ, բայց այժմ,
այժմ ինչ եմ տեսնում. տեսածս այն է, որ իմ հասնելու տեղս արդէն
հասել եմ, բայց այն տեղը չէ, ուր որ պիտի գնայի, հասնէի: Մորիկները
շատ անգամ իմ բռնած ճանապարհիցս ինձ հանեցին, ինձ զարկին հեռա-
ցրին, ուրիշ կողմ, ուրիշ տեղ ձգեցին: Հարկադրված էի բռնել ոչ թէ
այն ճանապարհն, որ կռնուկէի, այլ այն ճանապարհն, որ ղեկէր բռնէի:
Երբէք իմ վիճակիս, իմ ունեցած գրութեանս տէրը չեմ եղած. երբէք
իմ ձեռս չե եղած իմ վիճակս տնօրինելը, այլ ընդհակառակն իմ վիճակս
է իմ առաջն ձգել ինձ անծանօթ բաժինս: Պարճն ասեմ, աւելի ուրախ
ու րազդու եմ ինձ զգում այժմ այն մի քանի դատարկ ու խաբէական
մտքերովս ու յոյսերովս, քան թէ յետոյ, որ պիտի ծանր ու անախորժ
թուի ինձ, երբ որ տեսնեմ, որ արդարեւ դատարկ ու խաբէական գուրս
եկան:

Այսպէս ուրեմն պիտի իմ մանկութեանս ու պատանեկութեանս գնաք
բարով ասեմ. այսպէս պէտքէ ուրեմն իմ առաջվան յոյսերս, ակնկալու-
թիւններս թողնեմ: Աշխարհիս վերայ իմ ունենալու վիճակս ու բաժինս
ինձ տրված է. իմ ունեցած վիճակովս պիտի զոհ լինիմ, չձգեմ, նորան
հնազանդեմ, ոչ թէ հակառակեմ, որ եթէ մտքիցս անց կացնելու ևս լի-
նիմ, ձեռիցս գալու բան չէ: Ինչպէս որ մի մարդ քօղ'ց նայէ, այնպէս և
ես, թէև ապագաս քօղով ծածկված է ինձանից, բայց և այնպէս ա-
ռաջվանից տեսնումեմ ընդհանրապէս, թէ ինչպէս պիտի լինի ու ինչպէս
պիտի անցնէ իմ բոլոր կեանքս: Եթէ որ իմ այժմ ունեցած հանգամանք-
ներս անակնկալ դիպուածներով չխանգարվին, իմ կեանքս այս հանգարտ
ու անշարժ միակերպութեան մէջ պիտի մնայ ու մնայ: Իմ տեսածս կեան-
քիս մէջ այս է. երբեմն ուրախ գրութեան մէջ եմ լ'նում, երբեմն տխուր
ու րախութեան ետեւից տխրութիւն է գալիս, տխրութեան ետեւից ուրա-
խութիւն, մինչև որ երկուսն ևս վերջանան: Այն ժամանակ իմ կեանքս
ևս կվերջանայ: Աւերջին թի հօղը, որ կածվի իմ գերեզմանիս վերայ, ինձ
կծածկէ աշխարհից բոլորովին և ընդ միշտ: Պարելի է, որ սրտանց արտա-
սուք թափող կլինի իմ ետեւից. ասիւ շատ է պատահել, որ ես ևս այդ-
պիտի արտասուք թափած եմ: Պարելի է, որ մի բարի մարդ կգտնվի, որ
իմ մեռնելուցս տարիներ անց կենալուց յետոյ դեռ ևս իմ անունս տայ,
ինձ յիշէ բարեկամների մէջ: Բայց նա ևս կմեռնէ. այն ժամանակ ես
կմոռացվիմ: Ապագայումն ոչ ոք չի իմանայ, ոչ ոք տեղեկութիւն չի
ունենայ, որ ես ևս կենդանի մարդիկների կարգումն եղել եմ, աշխար-

Հումս ես ևս ապրել եմ, Իմ փոշիս քամին կցրուէ, կտանէ, Այս երկրագունդս, այս աշխարհս, իւր բոլոր փառաւոր ու գեղեցիկ բաներովն, հազարաւոր տարիների մի աւերակ է, որ շատ միլ'օնաւոր արարածների փոշովն է ծածկված. և ինչ որ այսօր կենդանի է ու ապրումէ, ուրախանումէ դեռ այն կանաչի վերայ, որ դուրս է գալիս, աշխարհիս երեսը եղած ամենայն բանի անցաւոր լինելը ցոյց տուող չափից դուրս հաստ մի վերարկուի մի վերմակի նման ծածկող փոշու վերայ:

Միտքդ բեր, որ ամենայն բան անցաւոր է. երբ որ միտք եմ անում, որ ես ևս անցաւոր եմ, ոչնչանալու եմ, ինչպէս սարսափումէ սիրտս, Իմ միտքս, իմ հոգիս այս կեանքիս մէջ տեսնումէ միայն մի աննպատակ, անմիտ շունչ քաշել, մի անմիտ, աննպատակ այս այն բանի ետեւից ընկնել, սիրտ մաշել, շարժարկել, տանջվել, այս կեանքս երևումէ մի այնպիսի բան, որ ոչ սկիզբն է երևում, ոչ վերջը, մի կտրած, մնացած կտորի է նման, որ չգիտես թէ որտեղ'ցն է. երևումէ ինձ այս կեանքս այնպիսի մի բան, որ սկսվումէ ու ձգտմունք ունի, անկատար մնացող ցանկութիւններով. մի խաղարկութիւն է, որ ոչ ծրագիր ունի, ոչ մի վստահութիւն իւր մէջ և ոչ մի բարիք:

Ճշմարիտ է. այս կեանքս մի աննպատակ ձգտումն կլ'նէր, մի ունայն ու ի զուր տխրութեան և ուրախութեան մէջ փոփոխակի ու անհաստատ կերպով օրեր անց կացնել, ոչ'նչ ցանկութիւնների մի խաբէութիւն կլինէր, ու մի ոչ'նչ բան, և չէր արժէր անգամ աշխարհիս երեսին ապրելը, եթէ որ այս երկրիս վերան մի կամարած և երկինք չպատէր, որ անմահ հոգիների հայրենիքն է, և եթէ որ իմ Փրկիչս կենդանի չլինէր:

Միմիայն հոգու յաւիտենական և անմահ լինելը խաբէութիւն չէ, անցաւորութիւնն կլանումէ միայն մեր ապականացու մարմինն և ինչ որ նորան է պատկանում, Երկիրը մեր գլխի վերայ եղած անսահման երկնքի հետ, այնպէս սերտ կապով է կապված, որ նորանից բաժանվել չէ կարող, Քրիստոս, իմ Փրկիչս կենդանի է, և տիեզերքի Աստուածը իմ Աստուածն է, իմ ողորմած Հայրս:

Որչափ որ աննպատակ և ունայն բան են երևում ինձ իմ կեանքիս օրերն, երբ որ կրօնի ինձ ցոյց տուած ճանապարհով չեմ ապրում, այնչափ լուսաւոր, նպատակաւոր, պարզ կարգաւորված է երևում ինձ իմ կեանքս, երբ որ երկնաւոր Արդապետի ուսման բարերար արևի լոյս ու տաքութիւն տուող ճառագայթների տակն եմ գտնվում, Այն ժամանակ խաւարը լուսաւորվումէ, հանելուկներն իմացվումեն, թէ ինչ են. անցաւորութիւնն անյայտանումէ. ես հասկանումեմ այն ժամանակ, որ ոչ մի բան չկայ, որ պատահմունքով եղած լինի, այլ ամեն բան բոլոր աշխարհս կարգադրող, կառավարող, անքննելի և ամենաբարի Աստուծու գործն է:

Աշխարհս առանց կրօնի, առանց Աստուծու, դժոխք է, ցաւերի և յուսահատութեան տուն է. բայց աշխարհս, երբ որ հաւատի լոյսով է լուսաւորված, երբ որ Աստուծու շնչովն է տաքութիւն և կեանք ստանում,

երկինք է, միակ մի ահադին մեծ տեղ է, ուր ամենայն բան օրէնք, կարգ ու կանոն, կապ ու ներդաշնակութիւն ունի:

Աչքդ ձգիր միանգամ դէպ ի վեր յաւիտենականութեան վերայ իշխանութիւն ունեցողին — և քո կեանքդ, ո՛վ մարդ, այլ ևս մի հանելուկ չի երևի քեզ: Ծծի երեխայն ևս, որ ծնվելուց յետոյ շուտ մեռնումէ իւր վերայ արտասուք թափող մօր կուրծքին վերայ, իմացիր, որ զուր շունչ չքաշեց, զուր չէր, որ այնպէս կարճ ժամանակ ապրեց: Ամենայն բան մին մինի հետ ամենասերտ կերպով կապված է ամենիմաստ Արարչի տնօրէնութեամբ: Նորա անսահման թագաւորութեան մէջ զարմանալի կերպով եղբայրացած են Աստուծու անթիւ զաւակները, այս աշխարհս, այս երկիրս, որ մի աստղ է միւս աստղերի աշխարհների մէջ, անսահման տիեզերքի մէջ խելքից մտքից դուրս հեռաւոր տեղեր գտնվող այն մեծ մարմիններին է պատկանում, որ մի մահկանացուի աչք երբէք չէ տեսել, և որ այնտեղ մեղ անծանօթ արեգակների շորս կողմն են պտոյտ գալիս:

Աչքդ վեր ձգիր դէպի երկինքը, ո՛վ իմ հօգի: Ի՞նչի ես տխրել կորցրած բանիդ վերայ, Ի՞նչի ես սուգ անում կորցրած բարեկամներիդ վերայ, որ կարճ ժամանակ միայն պիտի ապրէին այս աշխարհիս երեսին: Ախ, զուր փոքր տղայ չես, որ նոցա վերայ սուգ ես անում:

— Ի՛նչպէս էիր երբեմն ցանկանում, որ մեծանաս շուտով ու այն հասակիդ մէջ ունենալու վայելութիւններն քաշես: Ի՛նչպէս անհամբեր սրտով սպասումէիր այն օրերին որ քո ձեռսվդ քո լաւն ու վատն անես, կարգի դնես: Ահա եկար հասար այն օրերին, ու այժմ ցանկանումես, որ դարձեալ երեխայ դառն այիր: — Երբ որ դու դեռ ի՛նչ ասես մտքիցդ անց էիր կացնում քո երեխայութեանդ ուրախ անհոգ օրերում, քո մէջդ արդէն այն ժամանակը կար ցանկանալ մի անյայտ, անծանօթ բանի, որ ինքդ ևս չէիր իմանում: Թէ ինչ բանի ես ցանկանում այդպէս սրտով. դու զգումէիր, որ տղայական տհաս հասակիդ մէջ չես կարող հասնել ցանկացածիդ, Նորա համար շատ կամենումէիր և ասումէիր սրտումի, թէ երբ կգայ այն օրը, որ ես մեծանամ, այժմ մեծ եմ ես, ասեմ ինձ, Մեծացար, բայց քո ցանկութիւնդ այն բանին, որ ինքդ ևս չէիր իմանում թէ ի՛նչ է մտքիցդ սրտիցդ դուրս չեկաւ: Այժմ այն հասակի մէջ ես, որ յոյս ունէիր ցանկացածդ գտնել, բայց զեռ ևս չես գտել: Դու մի անվերջ տեղութիւն ունեցող բաղդաւորութիւն ես պտուում. կամենումես գտնել բարեկամութեան, հարստութեան, բարօրութեան, վայելութեան, անուն ունենալու մէջ. տեսնումես, որ այդ ամենը ունայն բաներ է:

Այս ամեն բանը, որ ամենեւին քո սրտիդ կամեցածի պէս դուրս չէ գալի, այլ բոլորովին հակառակն ես տեսնում, ի՞նչ են ցոյց տալի քեզ: — Ախ, քո անմտութիւնդ, որ դու քեզ անյայտ փրկութիւնդ, երջանկութիւնդ յամառութեամբ այն բաների մէջ ես պտուում, որ երկար ժամանակուայ բաներ չեն: Այդ կարճ օրերի բաներն ուրիշ ճանապարհներ են ցոյց տալիս, նոքա ասումեն քեզ թէ, ո՛վ մահկանացու մարդ, դու ան-

պղտոր երջանկութեան եւ ցանկանում քո հոգուդ համար, բայց պտուղ-
մես այն բաների մէջ, որ շատ շատ քո մարմնաւոր վայելութիւններին
միայն կարող են պէտք դալ, Դու հոգի եւ տալիս անանց բանի համար,
բայց այն բանի ետեւիցն եւ ընկնում միայն, որ անցաւոր է:

Վեր նայիր դէպի երկինքը, քո Աստուծուդ, Այստեղ չէ, այս մի քանի
աարի քաշող, երազի նման անց կացող օրերիդ մէջ չէ քո կեանքիդ նպա-
տակը, այլ յաւիտենականութեան մէջ, Անփոփոխ, անպղտոր, մշտական
ուրախութիւն պտուրի ոչ թէ հեշտ կորցնելու հարստութեան մէջ, ոչ թէ
սիրալիր ու քնքոյշ յարաբերութեան մէջ հոգեդէն մարդիկներին հետ, ոչ
թէ երկար չղիմացող ու անցաւոր աշխարհային փառքի փայլի մէջ, այլ
քո մտքիդ ու սրտիդ սրբութեան մէջ, քո հոգուդ կատարելութեան մէջ,
որ առաքինութիւններով կլինի: Այս վսեմ ճանապարհը պատահե՞լ է,
որ ոտ կոխած լինիս: Այս նեղ ճանապարհի մէջ արդէն պտուղ եւ այն
քեզ անյայտ ցանկացած բանդ, որ մտքիցդ ու սրտիցդ դուրս չէ գալիս ու
քեզ կատարեալ հանգստութիւն, ուրախութիւն չէ տալիս:

Վեր նայիր դէպի երկինքը, քո Աստուծուդ, — Ի՞նչի եւ լաց լինում այն
բանիդ համար, որ կորցրել ես, ու ջանք չես անում այն բանին, որ երբէք
չի կորչի: Մի՛ լար այն հողի վերայ, որ ձեռիցդ գնաց, կորցրիր. այն քեզ
մի քանի ժամանակի համար փոխ տուած բան էր: Աշխարհիս վերայ
խսկապէս իմս է ասելու բան ամենեւին չունիս, բացի Աստուծուցդ ու յա-
ւիտենականութենից: «Ես կենդանի եմ, դուք եւ կենդանի պիտի լինիք»
ասաց Փրկիչն: Լաց լինող Մարթային մխիթարումէր՝ «Նա այս խօսքերով»
«Ես եմ» յարութիւն եւ կեանք. ով որ ինձ կհաւատայ, եթէ մեռնի եւս,
կապրի»: (Յովհ. 11. 25) Այս խօսքերն քո արտասուքդ եւս պէտքէ դա-
դարեցնեն:

Վեր նայիր դէպի երկինքը, քո Աստուծուդ, ով մարդ, որ կեանքիցդ
զզուած ես, ու սիրտդ սաստիկ կոտորվել, Այնտեղ է մխիթարութիւնը,
եթէ որ բոլոր աշխարհս եւս քեզ չտայ, Այս վատ պատահմունքն որ քո
գլխիդ անբաղդութիւններ են բերում ու քո սիրտդ կոտորում, — այս դի-
պուածներն, որ քո յոյսերդ կորցնել են տալիս, ի վերուստէն ազդարա-
րութիւններ են, քո աւերված սրտիդ քո պարտականութիւններդ են միտքդ
ձգում, որ անհաստատ ու անցաւոր բաների յոյս չկապես ու չհաւատաս:
Վեր նայիր դէպի երկինքը, քո Աստուծուդ, Նա է, որի ձեռք քեզ նեղու-
թիւններ ու անբաղդութիւններ է ուղարկում, որ առաջվան խելքովդ
չմնաս, որ այս աշխարհիս մէջի ամենայն բանի անհաստատ լինելը լաւ
ճանաչես ու հասկանաս. որ աշխարհիս բարիքի վերայ յոյսդ չդնես, այլ
որ բանեցնես միայն իբրեւ առաքինութեանդ միջոցները քեզ դէպի յաւի-
տենականութիւն տանող ճանապարհիդ մէջ, Հեռացրու ձգիր հոգսերդ
հանիր սրտիցդ, ձգիր վախդ ու նեղութիւնդ, վերջացրու լացդ ու արտա-
սուքդ, եթէ որ հաւատդ քո սրտիդ վերայ մի ազդեցութիւն դեռ եւս ունի.
վեր նայիր քո երկնաւոր Հօրդ, որ քո ամենածածուկ ցաւերդ անգամ

գիտէ, նա քեզանից լաւ գիտէ, թէ ի՞նչ է պէտքն ու շահաւորը քո հոգիդ ազնուացնելու համար, գիտէ և ժամն ու ժամանակն քեզ նորից երջանկացնելու:

Ես գիտեմ, որ իմ Փրկիչս կենդանի է, ասումէր Յոր երանելին իւր սաստիկ տխրած ու ցաւերի մէջ տանջված ժամանակը: — Գիտեմ, որ իմ Փրկիչս կենդանի է, պիտի ասէ նոյնպէս քրիստոնեայն ուրախ սրտով:

Աւեր նայիր դէպի երկինքը, քո Աստուծուդ այ անկուշտ մարդ, որ այս ամէն ու տեսակ տեսակ Աստուծուց քեզ պարգեւած բարիքը ունենալովդ զեռ ևս գոհ չես: Ոչ մի բան քո սիրտդ այնպէս չէ կարող հանգստացնել ու քեզ գոհ անել, որչափ քո միտքդ բերելդ, որ Աստուած ամէն բանի վերայ իշխող, ամենայն բան կառավարող բարութիւն է: Երբ որ հաւատով դէպի երկինքը նայես, երկրաւոր բանի համար ունեցած հոգսդ ու վախդ քեզ նեղութիւն չեն տայ ամենեւին ու չեն չարչարի: Ամենայն ցանկացածիդ չհասար, շտիրացար, բայց դարձեալ չափազանց շատ բանի հասար, քան թէ արժանի էիր: Ի՞նչ էիր տուել Աստուծուն առաջվանից, որ քեզ կրկին տար յետ: Կամ թէ ի՞նչ աւելի արժանաւորութիւններ ունէիր դու այ ունայնասէր, քեզ նման մարդիկներից, որ քեզ վերայ ուրիշներից աւելի լաւ աչքով նայէ:

Կարելի է, որ զգոհութիւնդ քո կեանքիցդ, քո վիճակից, քո ունեցածիդ միայն քո մանր բաների ետեւից ընկնող հպարտ բնութենիցն է: Կարելի է, որ քո ցանկութիւնդ այն է, որ ուրիշների աչքը ծակելու համար, աւելի անուշ ունենայիր, իշխանութեան ու հարստութեան տէր լինէիր: Կամ կարելի է նորա համար զգոհ լինել, որ տեսնուամբ թէ ուրիշները քեզանից աւելի գերազանց են, որ կկամենայիր նոցա հաւասար լինել: — Այ ունայնասէր, ուրեմն արժանի ես աւելի ստոր վիճակի մէջ լինելու, ուրեմն դու արժանի չես այն բարիքին, որ Աստուած իւր հայրական խնամքով պարգեւել է քեզ, ողորմելով քեզ ու սիրելով: արժանի չես նորա համար, որ դու Աստուծու ամենակարող զօրութիւնն անգամ քո ամբարտաւան մտքերիդ ծառայեցնել ու քո կամեցածդ անել տալ կցանկայիր: Դու ոչ մի ճշմարիտ բաղդաւորութեան արժանի չես, որովհետեւ զեռ ևս վայելելը չգիտես, և որովհետեւ դու ինչ որ Աստուծու օրհնութիւն ունիս, ոտնակոխ ես անում մի խելքիդ զրած բանի համար, որ ամենիմաստն Աստուած քեզ չկամենար: Մի նզովեր այս կեանքը, թէ մի թշուառ կեանք է, չարժէ, որ մարդ ապրի այս աշխարհումս, աւելի լաւ կլինի, որ նզովես քո յիմարութիւնդ, Մի կռուեր քո կարծած բաղդաւորութեանդ արգելքների հետ, որ քո երեւակայութիւնդ է ստեղծում — աւելի լաւ կլինի, որ ինքդ քեզ հետ ու քո վատ կիրքերիդ հետ կռուես:

Աւեր նայիր դէպի երկինքը, ուր որ ամենին հատուցանողն է բնակում: Այնտեղից է իջնում այն հանգարտիկ խաղաղութիւնը, այն աստուածաշին, ցանկալի հանգստութիւնն անհանգիստ սրտի մէջ: Ով որ իւր վիճակի, իւր զրութեան սաստիկ փոխված ժամանակը չէ կարող իրան այն-


պէս պահել, որ բաղդաւոր իւրեան համարէ ու լինի, վայր նա դեռ ևս հաստատ հաւատ ունեցող մարդ չէ: Վայր, այնպիսի մարդի մէջ Քրիստոսի սուրբ Հոգին դեռ ևս զօրացած չէ: Այնպիսի մարդը, կեանքի սաստիկ ծակող փուշերի ցաւն դեռ ևս պիտի քաշէ, որ ունայն ու անցաւոր աշխարհիս ոչնչութիւնն, անհաստատ ու փոփոխական լինելը լաւ հասկանայ, որ սովորէ վեր նայել դէպի երկինքը, իւր Աստուծուն, որից զալիս է մեզ ամենայն բարին:

Իմ Փրկիչս կենդանի է. Նորա հետ ես ևս: Նորա հետ կենդանի են և նոքա ամենքը, որոնց Աստուած ինձ տուաւ. Նորա հետ կենդանի են ամենքն ևս, որ Աստուած ինձանից առաւ: Այո՛, ես կնայեմ, երկնաւոր Տէր, Քեզ աչքս ձգած, իմ երկրաւոր կեանքիս բաւիղից, և դարձեալ խաղաղութիւն ու հանգստութիւն կգտնեմ: Քեզ վերայ մտածելով, իմ Հոգիս կմաքրվի ու սուրբ կլինի. իւր կեանքից չի տրանջի, երբ որ կիմանայ, որ ամենազնիւն անգամ մարդիկներ ի մէջ, որ աշխարհումս երբէք գտնվել է, ցաւերի բաժակ է դատարկել, որ մտնէ Հօր փառքի մէջ:

Եւ երբ որ ցաւերն ինձ կընկճեն, — այն ժամանակ, վայր, ես լի հաւատով դէպի Քեզ դէպի վեր կձգեմ իմ աչքս և մխիթարութիւն կգտնեմ: Միտքս բերեմ իմ Փրկչիս, ինչպէս էր Նա խաչի վերայ դէպի Քեզ վեր նայում և մխիթարութիւն գտաւ: Ես ևս հաւատով կյաղմեմ ինչպէս որ Նա աշխարհին ու մահին յաղմեց: Ես ևս անարգված, արհամարհված լինեմ ուրիշներից, ես ևս ամենայն նեղութիւններ ու կարօտութիւններ քաշեմ մինչև անգամ հիւանդութեանս սաստիկ ցաւերի միջոցում, ուրախ սրտով դէպի Քեզ վեր կնայեմ, և իմ վերջին հառաչս յաւիտենական կեանքի արժանանալու յաղթանակի բարձրաձայն աղաղակս պէտքէ լինի թէ « Հօյր, Ք» յեւիթ էստեդ էմ հոգիս: »

(Թարգմ.)

Գ. Ե. Ա.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԻՆ ԱՒԱՆԳՈՒԹԻՒՆՆԵՐԻ

ՔՆՆՈՒԹԻՒՆԸ, (Արարատ, № 3):

Հայկական մատենագիրները Թուրքի երկրէ կանուանեն երբեմն իւրեանց երկիրը: Այս մասին աչքի կընկնի այս անունի վերայ եղած Աստուածաշնչի ազդեցութիւնը և կասկած կյարուցանէ թէ եղած է նա արդեօք երբ և իցէ ժողովրդական անուն: Արդեօք նա Աստուածաշնչի հետ ծանօթ միջնադարեան վարդապետների գրչի տակից դուրս եկած միայն ճարտասանական ձև չէ: Այդպիսի կարծիքը աւելի հեշտ կարելի է ենթադրել, որովհետև հայկական ազգի հնութիւնների մասին եղած բոլոր պատմութիւնները, որոնց Խորենացին պահպանած է, արհեստական կերպով կկապակցէ կամ ինքն Խորենացին կամ նորա աղբիւրը Աստուածաշնչի ասացուածների հետ:

Միւս կողմից ընդունելով որ Ելից գրքի Ժրգ զլիի ազգաբանական աղիւսակը պատմական նշանակութիւն ունի, մենք չենք կարող չնկատել